Կալիֆոռնիայի պաշտպանության և փաստաբանության համակարգ

# Կալիֆոռնիայի համայնքի անցումային (CCT, California Community Transitions) ծրագիր. Ուղի, որով տուն ինտերնատի բնակիչը կարող է վերադառնալ համայնք

*Ապրիլ 2021, Հրատ. #5602.10*

**Կալիֆոռնիայի համայնքի անցումային (CCS, California Community Transitions) ծրագրի դաշնային ֆինանսավորումը երկարաձգվել է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը: Ֆինանսավորումը կրկին կարող է մատչելի դառնալ՝ կախված դաշնային օրենսդրությունից և այն հանգամանքից, թե արդյոք Կալիֆորնիա նահանգն ի վիճակի է ծրագիրը շարունակել: Հավելյալ տեղեկությունների համար գալիք ամիսներին այցելե՛ք DRC-ի կայքէջ:**

## Հ. Ի՞նչ է իրենից ներկայացնում Կալիֆոռնիայի Համայնքի անցումային (CCS, California Community Transitions) ծրագիրը:

**Պ.** CCT ծրագիրը Medi-Cal-ի կողմից ֆինանսավորվող ծրագիր է, որը հասանելի է Առողջապահական ծառայությունների նահանգային դեպարտամենտի (DHCS, Department of Health Care Services) միջոցով՝ տրամադրելու անձանց, ովքեր ունեն իրենց ապահովագրական ծածկույթը Medi-Cal-ի միջոցով և ապրում են բուժհաստատությունում, իրենց անհրաժեշտ լրացուցիչ օգնությունը, որպեսզի նրանք տեղափոխվեն բուժհաստատությունից իրենց սեփական տուն:

## Հ. Ինչպե՞ս կարող եմ համապատասխանել CCT-ի ծառայություններին:

**Պ.** Եթե ունեք Ձեր բժշկական ծածկույթը Medi-Cal-ի միջոցով, և բնակվել եք բուժհաստատությունում, ինչպես օրինակ՝ հիվանդանոց կամ տուն ինտերնատ ավելի քան 60 օր, և Ձեզ անհրաժեշտ կլինի ստանալ այն ծառայությունները, որոնք ստացել եք այդ բուժհաստատությունում, որպեսզի ինքնուրույն ապրեք, այդ դեպքում Դուք համապատասխանում եք CCT-ի ծառայություններին:

## Հ. Ի՞նչ գործընթացով է ինձ օգնում CCT ծրագիրը:

**Պ.** Նախ, Ձեր տարածաշրջանի CCT-ի համակարգողը կայցելի Ձեզ, որպեսզի մշակի ծրագիր Ձեզ համար, որով կարող եք տեղափոխվել Ձեր ներկայիս բուժհաստատությունից համայնքի Ձեր ընտրած վայրը: Սա կարող է լինել Ձեր սեփական տունը, ընտանեկան տունը կամ Ձեր սեփական բնակարանը:

## Հ. Եթե չեմ կարող ինձ թույլ տալ վարձել բնակարան և գնել կենցաղային իրեր, որոնք ինձ անհրաժեշտ կլինեն այնտեղ ապրելու համար, արդյո՞ք կարող է CCT-ն նույնպես ինձ օգնել:

**Պ.** Այո՛, CCT ծրագիրը կարող է օգնել՝ գտնելու Ձեզ համար մատչելի բնակարան և վճարել այն պարագաների համար, որոնք կօգնեն Ձեզ հարմարվել բնակարանում և սկսել այնտեղ ապրել: CCT ծրագիրը կարող է նաև վճարել տան ձևափոխությունների համար, օրինակ՝ բռնովի ձողեր և թեքահարթակներ:

## Հ. Արդյո՞ք կա որևէ այլ բան, որով CCT ծրագիրը կօգնի ինձ:

**Պ.** Այո՛, նրանք կօգնեն Ձեզ որոշել այն բոլոր պարագաները, որոնք անհրաժեշտ կլինեն Ձեզ համայնքում ապրելու համար: CCT-ն կօգնի Ձեզ որոշել, թե որ ծրագրերը կտրամադրեն այս ծառայությունները: Դրանք ներառում են տուն ինտերնատի խնամք, ներտնային այցելության խնամք (Ներտնային օժանդակ ծառայություններ (IHSS, In Home Supportive Services)), բժշկական սարքավորումների ձեռքբերում, որոնք Ձեզ անհրաժեշտ կլինեն տանը, փոխադրում և

կօգնեն Ձեզ օգտվել որևէ այլ ծառայությունից, որը Ձեզ անհրաժեշտ է Ձեր տեղափոխված համայնքի անդամ դառնալու համար:

**Հ. Երբ CCT ծրագիրն օգնի ինձ ստանալ բնակարան, դասավորվել այնտեղ և նույնականացնել ծրագրերն ու օժանդակությունները, որոնք ինձ անհրաժեշտ կլինեն համայնքում ապրելու համար, արդյո՞ք CCT ծրագիրն ավարտում է ինձ տրամադրվող օգնությունը:**

**Պ.** Ո՛չ, ծառայություններից մեկը, որը CCT ծրագիրը տրամադրում է, գործի վարումն է: CCT ծրագիրը կթողնի Ձեր գործը բաց և կտրամադրի գործի վարման ծառայություններ 1 տարի շարունակ՝ սկսած Ձեր սեփական տարածք տեղափոխվելուց:

**Հ. Ինչպե՞ս կարող եմ կապ հաստատել CCT ծրագրից որևէ մեկի հետ:**

**Պ.** DHCS-ն պայմանագրեր է կնքում համայնքային մատակարարների հետ, ովքեր կոչվում են CCT-ի գլխավոր կազմակերպություններ, որպեսզի տրամադրի անձանց CCT ծառայություններ ողջ Կալիֆոռնիայով մեկ: Ինչևէ, ոչ բոլոր վարչաշրջաններն ունեն CCT: Ձեր տարածաշրջանում CCT-ի գլխավոր կազմակերպություն գտնելու համար՝այցելե՛ք DHCS-ի հետևյալ հղմամբ՝

California Community  Transitions  Project - DHCS - CA.gov

Կամ մանրամասների համար էլ. նամակ գրե՛ք DHCS-ին հետևյալ էլ.փոստով՝

California.CommunityTransitions@dhcs.ca.gov

Կամ զանգահարե՛ք DHCS՝ հեռախոսով մանրամասներին տեղեկանալու համար
**(916) 552-9105**
**(916) 552-9105**
(833)388-4551

Կարող եք նաև խնդրել Ձեր ընտանիքի անդամին, ընկերոջը կամ հաստատության սոցիալական աշխատողին, որպեսզի նա օգնի Ձեզ կապվել CCT-ի հետ:

**CCT-ի մատակարարների ամբողջական ցանկը ներկայացված է ստորև`**

ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ (CCT, California Community Transitions) ԾՐԱԳԻՐ ԳԼԽԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ
Վերջին թարմացում` 2020 թ. մարտի 19

**ACCESS TLC HOME HEALTH CARE**
Shelly Chilton
shelley@AccessTLC.com
(805) 517-1620
*Ընդգրկված վարչաշրջանները*` Los Angeles և Ventura

**ARCHANGEL HOME HEALTH, INC. (AHHI)**
Daniel Suh
cca-lo@archangelhomehealth.com
(562) 861-7047
*Ընդգրկված վարչաշրջանները*` Los Angeles, Orange, Riverside և San Bernardino

**CHOICE IN AGING (CIA)**
Karen Stuckey
kstuckey@choiceinaging.org
(925) 682-6330
*Ընդգրկված վարչաշրջանները*` Contra Costa, Sacramento և Solano

**DAYLE MCINTOSH CENTER (DMC)**
Bruce Morgan
bmorgan@daylemc.org
(714) 621-3300
*Ընդգրկված վարչաշրջանները*` Orange

**EAST BAY INNOVATIONS (EBI)**
Serom Kim Sanftner
ssanftner@eastbayinnovations.org
(510) 618-1580
*Ընդգրկված վարչաշրջանները*` Alameda

**FREED CENTER FOR INDEPENDENT LIVING (FREED)**
Valerie Sharp
valerie@freed.org
(530) 477-3333 / (530) 615-7327 / TTY (530) 477-8194
*Ընդրկված վարչաշրջանները*՝ Colusa, Nevada, Sierra, Sutter և Yuba

**HOME AND HEALTH CARE MANAGEMENT (HHCM)**
Shelly Estrada՝ Անցումային խնամքի տնօրեն
sestrada@homeandhealthcaremgmt.com
(530) 343-0727 / (800) 400-0727
*Ընդրկված վարչաշրջանները*՝ Butte, Colusa, Del Norte, El Dorado, Glenn, Humboldt, Lake, Lassen, Modoc, Nevada, Placer, Plumas, Sacramento, San Joaquin, Shasta, Sierra, Siskiyou, Solano, Sutter, Tehama, Trinity, Yolo և Yuba

**INDEPENDENT LIVING CENTER OF KERN COUNTY (ILC-KC)**
Jimmie Soto՝ ILCKC-ի տնօրեն
Jimmie@ilcofkerncounty.org
(661) 325-1063
*Ընդրկված վարչաշրջանները*՝ Kern

**INDEPENDENT LIVING CENTER OF SOUTHERN CALIFORNIA, INC. (ILC-SC)**
Norma Jean Vescovo
nvescovo@ilcsc.org
(818) 785-6934
*Ընդրկված վարչաշրջանները*՝ Los Angeles

**INDEPENDENT LIVING RESOURCE CENTER, INC. (ILRC-SB)**
Brian Hollander
bhollander@ilrc-trico.org
(805) 963-0595 x 112
*Ընդրկված վարչաշրջանները*՝ San Luis Obispo, Santa Barbara և Ventura

**INNERJOY HOME HEALTH SERVICE (INNER JOY)**
Craig Michayluk
craig@innerjoy.com
(805) 522-1420
*Ընդրկված վարչաշրջանները*՝ Los Angeles և Ventura

**INSTITUTE ON AGING (IOA)**
Matthew Mouille
mmouille@ioaging.org
(415) 750-8760
*Ընդրկված վարչաշրջանները*` San Francisco, San Mateo և Santa Clara

**LASTING INCOME FOR ELDERLY INC. (LIFE)**
Lilian Bruce
lilianbruce@lifereferral.org
(805) 377-0625
*Ընդրկված վարչաշրջանները*` Kern, Kings, Santa Barbara և Ventura

**LIBERTANA HOME HEALTH OF SHERMAN OAKS (LHH)**
Yanine Arias
yarias@libertana.com
(800) 750-1444
*Ընդրկված վարչաշրջանները*` Fresno, Imperial, Kern, Los Angeles, Orange, Riverside, San Bernardino, San Diego, San Luis Obispo, Santa Barbara և Ventura

**PARTNERS IN CARE FOUNDATION (PARTNERS)**
Jacqueline Ascenzi, MSW-ի անցումային ծրագրի գլխավոր համակարգող
jascenzi@picf.org
(818) 408-5250
*Ընդրկված վարչաշրջանները*` Los Angeles, Riverside և San Bernardino

**SILICON VALLEY INDEPENDENT LIVING CENTER (SVILC)**
Sheri Burns
Sherib@svilc.org
(408) 894-9041
*Ընդրկված վարչաշրջանները*` Santa Clara

**THE CARING CONNECTION (TCC)**
Deb Harvey
deb@thecaringconnection.com
(818) 368-5007 / (888) 595-4555
*Ընդրկված վարչաշրջանները*` Los Angeles, Orange և Ventura

**VENTURA COUNTY AREA AGENCY ON AGING (VCAAA)**
Haleh Hashemzadeh
Haleh.Hashemzadeh@ventura.org
(805) 477-7384
*Ընգրկված վարչաշրջանները*` Ventura

---

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [Լրացնել հարցաշարը]

## Ստացե՛ք օգնություն

Եթե Դուք հաշմանդամություն ունեցող որևէ անձին ներկայացնող անհատ, ընտանիքի անդամ կամ փաստաբան եք և ունեք Ձեր հաշմանդամությանն առնչվող հարցեր իրավունքների վերաբերյալ, ապա զանգահարե՛ք`
**1-800-776-5746**
կամ զանգահարե՛ք հեռատիպ` 1-800-719-5798
Երկուշաբթիից ուրբաթ առավոտյան 9-ից մինչև 4-ը

*Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք`* http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html.